## 144. ՔՅԱ̈ՍԻԲՆ ՈՒ ԻՐԱՆ ԷԾԸ

*Մի քյա̈սիբ մարթ ա ըլըմ։ Սա̈ մի ղատ էլ ա ունենըմ չի, մի էծ ա ունենըմ։ Ինչքան սրա̈ տուն ղոնաղ ա կյա̈լի, սա̈ սուտ տա-նակը սըրըմ ա, ասըմ ա. «էծը մորթիլ դեմ»։*

*Ղոնաղնին էլ ասըմ են. «Չէ՛, ուզիլ չի, մորթիլ մի»։*

*Նա̈ էլ գյլիս ա տքանըմ, ասըմ ա. «Չէ՛, մորթիլ դեմ»։*

*Վերչը ղոնաղնին քյնըմ են, էծը մընըմ ա։*

*Մի անքամ էլ նույն ղոնաղնին կյա̈լիս են տրա̈ տուն։ Սա̈ ըլետ տա̈նա̈կը սըրըմ ա, ասըմ ա. «էծը մորթըմ եմ»։*

*Ղոնաղնին ծեն չեն հանըմ։ Սա̈ քյնըմ ա իծի կողքին կաղնըմ, ասըմ ա. «էծը մորթըմ եմ»։*

*Ըլետ տաղ են անըմ, վերչը տենըմ ա ըլա̈վ վըեչ, էծը վեր ա քցըմ, մորթըմ։*

*Կնիկը, վըեր տըենըմ ա, ասըմ ա. «Վի՜, վի՜, ա՛ տղա, ղորթ մորթեցի՞ր»։*

*Ասըմ ա. «Բա ի՞նչ անեմ, օսալ ղոնաղի հերն էլ չի ընծեցի՞։ Ծռեսուն հետ ասեցի. «Մորթըմ եմ, մորթըմ եմ», լալկվել են, մինն էլ ա ծեն չի հանըմ. բա էլ ես ի՞նչ անեմ, վըեր մորթեմ վըեչ»։*